ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՅԱՆ ԱՄՐՈՑԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կայան բերդի տեղադրության խնդիրն այսօր էլ շարունակում է զբաղեցնել մասնագետների միտքը[1], քանզի դրա հստակեցումով հնարավոր կլիներ ճշտել պատմական այլ իրողություններ, իսկ հետազոտողները կձերբազատվեին հետագա անպտուղ որոնումներից:

Հայտնի է, որ Կայան ամրոցի (եւ նրա հետ նույնացված Աղջկա բերդի) ուսումնասիրությունը 1874թ. սկսել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի բարձր դասարանի աշակերտ, ծնունդով Քարվանսարա գյուղացի (այժմ՝ Իջեւան քաղաք) Մարտիրոս Սիմոնյանը, որը հնավայրում տեսել է բազմաթիվ սենյակներ: Հետագայում Կայան բերդի եւ համանուն գավառի ուսումնասիրության, տեղորոշման եւ անունների ճշգրտման հարցերով զբաղվել են Մ. Բարխուդարեանցը, Հ. Եղիազարյանը, Գ. Շահկյանը, Ռ. Մաթեւոսյանը եւ Հ. Եսայանը: Սպասելի էր, որ նրանք բոլորն էլ կանսային խնդրի լուծման սկզբնաղբյուր հանդիսացող Հովհաննես Դրասխանակերտցի եւ Կիրակոս Գանձակեցի պատմիչների վկայություններին: Դրասխանակերտցին հաղորդում է, որ Բագրատունիների ժամանակ հայտնի դարձած Կայան բերդը գտնվում է Ուտիքի կողմերում՝ Զորոփորում, որը համապատասխանում է Աղստեւ գետի միջին հոսանքի շրջանին: Իսկ Գանձակեցին Մխիթար Գոշի Դասնո անապատից Հին Գետիկի վանք վերադառնալու կապակցությամբ ասում է, թե մեծահռչակ վարդապետը «բնակվեց Գետիկ կոչված վանքում՝ Կայան գավառում Աղստեւ մեծ գետի աջ կողմի վրա»: Սակայն, ուսումնասիրողներից ոմանք, անտեսելով այս հստակ փաստերը, Կայան ամրոցն ու համանուն գավառը սկսել են որոնել այլուր եւ «գտել են»: Նաեւ փորձ է արվել նույնանուն բերդն ու գավառը տարանջատել իրարից. մեկին թողել են Աղստեւի ափին, մյուսին տեղափոխել Տաշիրք՝ Դեբեդի հովիտ:

Երեք տասնամյակ առաջ խնդրի պարզաբանմանը նկատելի ավանդ բերեց այժմ հանգուցյալ Ռաֆայել Մաթեւոսյանը: Նա իր աշխատության մեջ[2], առկա փաստերի համադրմամբ ապացուցեց, որ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Զորոփոր գավառը Բագրատունիների թագավորության շրջանում (ենթադրաբար՝ Աշոտ Երկաթի) կառուցված անառիկ Կայան բերդի անունով Մահկանաբերդի Արծրունիների եւ Զաքարյանների ժամանակներում կոչվել է Կայան գավառ: Հետագայում մեր կողմից այդ տեսակետն ավելի ամրապնդվեց գիտնականին անհայտ երկու կարեւոր վավերագրերով[3]:

Դրանցից առաջինը 13-րդ դարի սկզբին Կայան գավառի Միափոր կոչվող ձորի (Գետիկի ձոր) Զարմանազանք վանքում ընդօրինակված Ավետարանն է: Մյուսը նույն դարի

երկրորդ կեսին խնդրո առարկա բերդից երեք կիլոմետր արեւմտյան կողմի վրա գտնված թեւավոր խաչն է, որի արձանագրությունը կազմել են տեղի՝ Կայան գավառի ձեռնավորները: Այսպիսով, այս գավառի տեղադրության հարցը վերջնականապես լուծված պետք է համարել, իսկ ահա Կայան ամրոցի տեղադրության խնդիրը մնում է բաց, քանզի իր նորագույն ուսումնասիրությամբ հնագետ Հ. Եսայանն այն նույնացրել է Աղստեւի աջափնյակի ժայռին թառած Մանթաշ ամրոցի հետ, որը մեր կարծիքով անընդունելի է: Եվ ահա թե ինչու:

Ունկնդրենք մեր հարազատ Կիրակոս պատմիչին: Որպես իրադարձությունների ժամանակակից կամ անմիջական մասնակից, մոնղոլական արշավանքի կապակցությամբ նա հայտնում է. «Իսկ իշխանն մեծ՝ որդին Իւանէի, որ Աւագն կոչէին, իբրեւ եկեալ զայն ամենայն բազմութիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ եւ նա ի բերդն ամուր, որ կոչի Կայեան. եկին եւ ամենայն բնակիչք գաւառին, ամրացան եւ նոքա շուրջ զբերդովն: Իբրեւ գիտացին զօրքն այլազգեաց, թէ անտ ամրացաւ իշխանն, մի ոմն ի նոցունց գլխաւորացն, որում անուն էր Իտուղատայ, առեալ զօրս բազումս, եկն պաշարեաց շուրջ զբերդովն: Եւ առհասարակ լցաւ աշխարհն ի զօրաց այլազգեաց, զի ի նմա գաղթեալ էին յամենայն կողմանց վասն ամրութեան վայրացն: Ածին շուրջ զստորոտով բերդին որմս յամենայն կողմանց, յղէին պատգամս առ Աւագն՝ գալ ի հնազանդութիւն ծառայութեան նոցա եւ մի՛ երկնչիլ»[4]:

Բերդի ստորոտով պատ դնելը եւս այնտեղ պաշարված մարդկանց ծարավի մատնելու փորձված միջոց էր, որի զորությամբ մոնղոլները շուտով գրավեցին ամրոցը: Աշխատության մեկ այլ էջում պատմիչը Կայանն անվանում է անառիկ: Ուստի մենք պետք է փորձենք մտնել մի բերդ, որը լինի. ա) անառիկ, բ) այնքան մեծ, որ կարողանար ապաստան տալ գավառի բազմաքանակ ժողովրդին, գ) որի ստորոտում ամեն կողմից նշմարվեն մոնղոլների դրած պատերի հետքերը: Այդպիսին գտնելու համար նախ ներկայացվող գծապատկերով դիտարկենք մեզ հետաքրքրող միջավայրը:

Ինչպես երեւում է գծապատկերից, Աղստեւ գետի ձախափնյակում կա երկու (նշված են 1 եւ 2 թվերով), իսկ գետի աջ ափին, նախորդներից 3-4 կմ հեռավորության վրա՝ մեկ (նշված է 3 թվով) բերդ: Եվ ստացվել է այնպես, որ դրանցից 2-րդը միշտ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: 1-ինը, որը հառնում է Իջեւանի լեռնաշղթայի հիմքից դեպի հարավ-արեւելք (Աղստեւի ձախափնյակ) ձգվող լեռնամատի ծայրին վեր խոյացող խիստ զառիթափ լանջերով ժայռի կատարին, ունի պարիսպներ, ջրավազան, գողտրիկ մատուռ, մի քանի կացարանների հետքեր եւ շուրջ կես հեկտար մակերես: Տեղացիներին հայտնի է Աղջկա բերդ (Ղըզ ղալա) անունով, իսկ հնագետները սա նույնացրել են Կայան բերդի հետ: Անշուշտ, անառիկ ամրոց է, սակայն չէր կարող տեղավորել գավառի՝ թշնամուց փախած մեծաքանակ բնակչությանը: Բացի այդ, 40-50 մետր վեր հառնող ժայռերի ստորոտներում չկան որմեր: Ուրեմն, Կիրակոս պատմիչը սրա մասին չէ, որ վկայում է:

3-րդը, որը Հ. Եսայանը ներկայացնում է որպես Կայան ամրոց, տեղացիներին հայտնի է Աշոտ Երկաթի բերդ կամ Մանթաշ ղալա անունով: Սա, ինչպես ասվեց, գտնվում է



ԿԱՅԱՆ ԳԱՎԱՌԻ ԲԵՐԴԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Աղստև գետի հակադիր ափին, Դայտրապար լեռնաշղթայի անտառապատ ժայռերից մեկի վրա: Այո, բնականից այն երեք կողմից անառիկ է, գրավում է 2 հեկտար տարածք, ունի միջնաբերդ, ջրավազան, կացարանների հետքեր: Այս ամրոցը, իհարկե, կարող էր թշնամական հարձակումների ժամանակ ընդունել բազմաթիվ մարդկանց, անառիկ է եղել երեք կողմից, ուր ժայռերն են: Սակայն, հարավ-արեւելքից եղել է խոցելի, քանի որ հակառակորդը կարող էր այդ կողմից մոտեցնել պարսպակործան մեքենաներ եւ տեսնել իր սեւ գործը: Իսկ գլխավորն այն է, որ ոչ ժայռերի սրոտրոտներում եւ ոչ էլ հարավ-արեւելյան կողմի հարթակի վրա չեն նշմարվում որմերի հետքեր: Ուրեմն սա էլ չէ պատմիչի ասած բերդը:

Հիմա մոտիկից դիտարկենք մինչ այժմ հնագետների ուշադրությունից վրիպած 2-րդ բերդը, որը տարածված է 1-ին ամրոցի լեռնամատին արեւելքից զուգահեռ, շուրջ մեկ կիլոմետր հեռավորությամբ, նույնպես Իջեւանի լեռնաշղթայից սուր թերակղզու նման դեպի Աղստև գետը սլաքվող մի այլ լեռնաճյուղի ծայրամասին, որի երկու կողմերից ուղեկցում են ներքեւում իրար միացող խոր ձորակները: Այս «թերակղզին» անտառապատ ու խիստ քարքարոտ լեռնաբազուկ է, որը տեղացիները գիտեն Էվլկուտի յալ (ավելաշատ բլուր) անունով: Սակայն նրա ինչ լինելը տեղացիներից շատերին է անհայտ, քանի որ ամբողջապես քարածածկ լինելու հանգամանքով հետաքրքրություն չի ներկայացնում որպես արոտատեղ կամ դեղաբույսերի, հատապտուղների եւ ուտելի բանջարների հավաքման վայր, ուստի մարդիկ կողքով անցնում են անհաղորդ: Հենց այս պատճառով մասնագետներն անտեղյակ են մնացել հնավայրի գոյությանը:

Էվլկուտի յալը երկու ձորերի հատակից մեծ թեքությամբ եւ 70-100 մետր բարձրացող եռակատար-թրաձեւ ձգված քարեղեն գոյացություն է: (N 2 բերդի հատակագծում կատարները նշված են Ա, Բ, Գ տառերով): Իջեւանի լեռնաշղթայի հիմքին մոտ Ա ժայռը հնավայրի համար այն դերն է կատարում, որ նրա ու Բ կատարի հյուսիս-արեւմտյան եզրը կազմող



N2: ԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

բարձր քարափի արանքով է անցնում Արարատյան դաշտ-Աղստևի հովիտ-Գազա դաշտ-Տփխիս հնագույն քարավանային ճանապարհը: Իսկ մեզ հետաքրքրողները Բ եւ Գ կապարներն են, որոնց միասնությունը կողքից նման է թամբի, եւ դրանք միացած են 35-40 մետր լայնածքով: Այս երկու կապարների եզրերով ձգվում է քարակուռ բերդապարիսպը, որը որոշ հատվածներում պահպանվել է 2.5-3 մետր բարձրությամբ, իսկ այլ տեղերում ընդհատվում է՝ հանգուցվելով ուղղաձիգ քարափների կապարներին, որոնց մոտենալը չափազանց դժվար կամ պարզապես անհնարին է եղել հարձակվողների համար:

Որոշ հեռավորությունից խիստ զառիթափ լանջեր ունեցող, իոր թամբոցով իրար միացող Բ եւ Գ կապարների միասնական համայնապարկերը հիացմունք եւ զարմանք է պատճառում: Դրանք նման են բյուրափող հսկա երգեհոնների, քանզի կազմված են երկրի ընդերքից դեպի երկինք խոյացող անհաշիվ քանակի 3, 4 եւ 5-կողանի բազալտե սյունափնջերից: Դարերի ընթացքում սրանց ծայրերը բնության հարվածներից կոտրատվել են տարբեր երկարությամբ, լեռնաթեւի վրա կուտակվել որպես անսպառ պարբասպի որմնանյութ: Ապա ինչ-որ ժամանակ բնության այս կերտվածքն արժանացել է երկրի պաշտպանությամբ մտահոգ տիրոջ ուշադրությանը, որը եղածին հավելել է իր կառուցողական փայլուն միտքը եւ հիմնել անառիկ մեծ ամրոց: Եվ այնքան մեծ, որ թշնամիների հարձակումների ժամանակ նրանում կարող էին ապաստանել զավառի գյուղերի մի քանի հազար բնակիչները, քանզի երկու լեռնակապարներն օղակող պարիսպներից ներս պարփակված է 4-4.5 հեկտար տարածք: Կերտվածքի եղանակով եւ մեծությամբ այս ամրոցը եզակի է Հայաստանի հյուսիս-արեւելքում:

Բերդի բոլոր շինությունները կերտված են բացառապես վերը նշված բազալտե սյուներից, երկայնակի իրար վրա շարելով՝ առանց շաղախի: Իսկ համալիրը բաղկացած է Բ եւ Գ կապարների եզրերով ձգվող պարսպից, Բ գագաթի բարձրակետում կառուցված կլոր

հատակագծով «իշխանական պալատից», երկու գագաթներին տարածված ուղղանկյուն հատակագծով մի քանի փասնյակ սենյակներից: (Հավանաբար 1874թ. դրանք է տեսել Մ. Սիմոնյանը): Ջրավազանի եւ հոգեւոր շինության հետքեր չեն նշմարվում, գուցե գտնվում են քարակարկառների տակ: Դարիսպները դնելիս անանուն ճարտարապետը օգտվել է տարբեր հաստության եւ երկարության բազալտե սյուներից, որոնց արտաքին ծայրերը կազմել են պարսպի ճակատը, իսկ սենյակների ներսում՝ պատերը: Անշուշտ, սենյակներն ունեցել են փայտե ծածկ, որը մթերվել է շրջապատող անտառից: Ռ կատարից թեքությամբ դեպի թամքոցի հատակն իջնող սենյակները տեղադրված են հարավ-արեւելյան, Գ կատարինը՝ հարավային ուղղությամբ: Ի դեպ, Գ կատարի սենյակները կառուցված են «փոփոխական հարկերի» եղանակով, ներքեւինի տանիքը բակ է ծառայել վերեւինի համար: Ամրոցի տարողությունը մեծացվել է պարսպից դուրս գտնվող կլոր եւ ուղղանկյուն հատակագծով կացարաններով, որոնք գուցե նախատեսված են եղել բերդապահ զինվորների համար: Մուտքերը հավանաբար եղել են թամքոցի արեւելյան եզրից եւ Ռ կատարի ժայռի արեւմտյան լանջի ստորոտից: Խմելու ջուր պաշարվածները վերցրել են մոտակա երկու ձորակների աղբյուրներից: Եվ վերջապես, ամրոցի պարիսպներից մի քանի փասնյակ մետր ներքեւ, Էվլկուտի յալի ստորոտի ողջ երկայնքով, նշմարվում են քարե պատերի հետքեր: Ուրեմն Աղստեւի հովտի այս հատվածում առկա երեք բերդերից միայն սա է համապատասխանում Գիրակոս Գանձակեցու ասածին:

Այդ դեպքում հարց է առաջանում՝ շատ մոտ տարածության վրա ի՞նչ դեր է կատարել N 1 ամրոցը: Այդ մասին հետաքրքիր տեսակետ են հայտնել «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հեղինակները[5]: N 1-ը ընդունելով որպես Կայան բերդ, միաժամանակ առանց տեղը ստույգ նշելու, նրանք ասում են. «Բուն բերդի ավերակները գտնվում են մի առանձնացած ու զառիթափ լանջերով լեռան վրա»: Եվ հոդվածի հեղինակներն էական արդյունքներ են ակնկալում հետագա հետազոտություններից: Լիովին համամիտ ենք նրանց հետ: Մեր կարծիքով, Գիրակոս պատմիչի ասած Կայան բերդը սույն հոդվածում ներկայացված Էվլկուտի յալի հնավայրն է, իսկ տեղանունների բառարանի հեղինակների ընդունած Կայան ամրոցը (N 1)՝ նույնանուն հզոր բերդի համակարգի մեջ մտնող միջնաբերդը, ուր մոնղոլների հարձակման ժամանակ իր աղիով ապաստանել էր հռչակավոր Իվանե Զաքարյանի որդի Ավագը: Ուստի եւ Աղստեւի աջափնյա ժայռին թառած ամրոցը (N 3), որին տեղացիներն Աշոտ Երկաթ կամ Մանթաշ դալա են կոչում, դեռ անհայտ է պատմական անունով:

1. ՏԱՎՈՒՇ – նյութական եւ հոգեւոր ժառանգություն, Երեւան, 2009, էջ 78-79: (Հայկ Եսայան, «Կայան ամրոցի տեղադրությունը եւ նրա պեղումները»):
2. Ռ. Մաթեւոսյան, Տաշիր – Զորագեր, Երեւան, 1982:
3. Ռ. Սիմոնյան, Տավուշի մարզ, Երեւան, 2003, էջ 56:
4. Գիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երեւան, 1961, էջ 254-255:
5. Հատոր 2, Երեւան, 1988, էջ 928: